

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: [info@artsakhib.am](mailto:info@artsakhib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՀՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ  
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ  
ՕՐՐԱՆ

ՀՏԳ- 941 (479.25):325

ԳՄԳ- 63.3(2Հ)+66.3(2Հ)

Շ 973

Գիտաժողովը նվիրվում է

Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝

Արտակ Մադալյան

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝

Արամ Սիմոնյան – ԵՊՀ ռեկտոր, Վլադիմիր Բարխուդարյան – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, Բաբկեն Հարությունյան – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, Աշոտ Մելքոնյան – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, Ռուբեն Սաֆրաստյան – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, Արարատ Աղասյան – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, Պավել Ավետիսյան – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Շ 973 ՇՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ԶԱՂԱԶԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

ԳՄԳ- 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007

ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԳԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱՍ ՀԱԻ

**ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ  
ԿԵՆՑԱԿՎԱՐՈՒՄԸ ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆՈՒՄ  
(Ըստ 1970 թ. դաշտային նյութերի)**

Շուշիի ու նրա շրջակա գյուղերի բանահյուսական բազմաժանր նյութերի գրառմանը հայ բանահավաքները ձեռնամուխ են եղել դեռևս 19-րդ դ. 2-րդ կեսից: 1860-ական թվականներին Առաքել և Գրիգոր Բահաթրյանները, այնուհետև՝ Կոնստանդին և Ալեքսանդր Մելիք-Շահնազարյանները հիշյալ շրջանից գրառել են բազմաքանակ ու տարաժանր բանահյուսական ստեղծագործություններ: Տարածաշրջանի բանահյուսական նյութերը կորստից փրկելու գործում մեծ վաստակ ունի նաև բանահավաք, Բաքվի նախկին հայկական մանկավարժական ինստիտուտի դասախոս Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանը, որ 1920–1960 թթ. անընդմեջ գրառումներ է իրականացրել Լեռնային Ղարաբաղում, մասնավորապես հայրենի բնօրրանում՝ Շուշիում: 1970 թ. ԳԱՍ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատողներից կազմված մի արշավախումբ (ղեկավար՝ պրոֆ. Դ.Վարդումյան) մեկնել է Շուշիի, Մարտակերտի և Շահումյանի շրջաններ՝ հետազոտելու, իրատեսորեն գնահատելու հիշյալ տարածաշրջանում ավանդական կյանք ու կենցաղի, բառ ու բանի, խոսք ու զրույցի պահպանման, ժամանակի ու տարածության ներազդեցությամբ՝ դրանցում իրականացվող տեղաշարժերի բնականոն գործընթացները: Արշավախումբը ժամանակի զգալի մասը հատկացրել էր Շուշիի շրջանի Քարինտակ, Եղցահող, Մեծ Ղարաղշլաղ, Քյոհնա շեն (Կիրով), Ենգիբար, Բերդածոր գյուղերի ավանդական կենցաղի հետազոտմանը: Ի դեպ, հիշյալ գյուղերի բնակիչները հիմնականում տեղաբնիկներ էին,

միայն Բերդաձորի ընդամենը 20 տնտեսություն ունեցող գյուղի բնակչության մի մասը Գորիսի Բայանդուր գյուղից և Սիսիանից վերաբնակվածներ էին: Ժողովրդագիտական ավանդույթներով հարուստ վերոհիշյալ շրջանը, ճիշտ է, մասամբ էր պահպանել իր բանահյուսական երբեմնի գունեղ նկարագիրը, սակայն նրանց բանարվեստում պահպանված էր և՛ ընդհանուր ազգայինը, և՛ այն տեղայինը, որոնցով բնորոշվում է հայ ժողովրդի տվյալ հատվածի յուրահատուկ խառնվածքն ու բանահյուսական մտածելակերպը: Նրանց երկացանկն ընդգրկում էր հիմնականում վիպական արձակ ստեղծագործություններ՝ հեքիաթներ, երգիծական, սնահավատական, կենցաղային գրույցներ, տեղանվանական ավանդազրույցներ, հանելուկներ, առած-ասացվածքներ և այլն: Ինչպես ողջ Արցախում, այնպես էլ Շուշիի շրջանում արձակ բանահյուսությանն իր տեղը զիջում էր քնարական ժանրը: Եթե չլինեին անցյալում մեր բանահավաքների կողմից իրականացված գրառումները, կթվար, թե առհասարակ հիշյալ ժանրը չի կենցաղավարել տարածաշրջանում<sup>1</sup>: Նման ժանրային անհամամասնությունը, անշուշտ, ուներ իր պատճառները. Արցախի ենթակայությունը Ադրբեջանին, մայր հայրենիքի հետ մշակութային կապերի խզումը, ռադիոյով մշտապես ադրբեջանական երգերի հաղորդումները նպաստել են օտարալեզու, օտարածայն երաժշտական հնչերանգների ներթափանցմանը և տարածմանը հայ կյանք ու կենցաղում, և ազգային հիշյալ արժեքների փոխանցումների բնականոն ընթացքը սերնդից սերունդ արհեստականորեն ընդհատվել էր:

Բանասացների հիշողության մեջ, սակայն, պահպանվել էին ծիսերգերի որոշ պատառիկներ: Դրանցից են՝ Քրիստոսի ծնունդն ավետող «Ալելուիան», որը կատարվում էր Ծննդյան ճրագալույցի երեկոյան և երաշտի դեմ՝ հատուկ ծիսակատա-

<sup>1</sup> Ս. Գրիգորյանի ժողովածուում զետեղված 1800 խաղիկների մեծ մասը գրառված է Շուշիից ու նրա շրջակա գյուղերից: Տե՛ս Ս. Գրիգորյան, Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը, Ե., 1971, էջ 11-289:

րության ընթացքում կատարվող «Գողի» երգի երկու տարբերակները: Մեր կողմից Քյոհնա շեն (Կիրով) գյուղում նախկինում տիրացու 80-ամյա Ավանես Պետրոսյանից գրառած «Ալելուիա»-ի քառատող հետևյալ տարբերակը իր բնույթով եզակի է.

*Ալելուիա, Ալելուիա,*

*Ճրօխնեքը եկու ճրբբբբբբբբբ,*

*Արևը եկու ըրբվլուսավ,*

*Ջաղեղը եկու ըրբվլուսավ<sup>2</sup>:*

Վարանդայից՝ 1890-ական թվականներին Խաչիկ վրդ. Դադյանի գրառած «Ալելուիա»-ի տարբերակի համեմատ<sup>3</sup>, վերջինս բանավոր փոխանցման ճանապարհին կրել է ծավալային ու բովանդակային փոփոխություններ: Նրա գրառած տարբերակն աչքի է ընկնում Քրիստոսի ծնունդը խորհրդանշող սյուժեների բազմաշերտ էությանը, հեթանոսական, քրիստոնեական ծիսահավատալիքային մտածողության տարաբնույթ դրսևորումներով, մասնավորապես ավետարանական սյուժեների ընդգրկմամբ<sup>4</sup>: Մեր գրառած տարբերակում նույն, իսկ կերպարի՝ Քրիստոսի ծնունդն ու վերածնունդը խորհրդանշող տոները՝ Ջրօրհնեքը և Մեծ Չատիկը, մեկտեղվել են մի քառատողում: Նման հարակցումները, այսինքն՝ տարբեր սյուժեների, մոտիվների միավորումը սեղմ ձևերի մեջ հատուկ է ժողովրդական բանահյուսությանը: Ի դեպ, միավորումը կատարվում է հիմնականում բանահյուսական սյուժեներին ու մոտիվներին քաջատեղյակ բանասացների կողմից: Տվյալ դեպքում հիշյալ քառատողում տեղի ունեցած հարակցումը կարող

<sup>2</sup> Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվ, այսուհետ՝ ՀԱԻԲԱ FFV-VII-6201 (Ս. Վարդանյանի հավաքածու):

<sup>3</sup> «Արարատ», 1895, թիւ 11, էջ 471:

<sup>4</sup> Տե՛ս Ս. Վարդանյան, Պաշտամունքային տարրերը «Ալելուիա»-ի արցախյան տարբերակներում, «Պատմա-բանասիրական հանդես», 2002, N 2, էջ 148-155:

է իրականացնել միայն Տիրոջ ծննդի և վերածննդի գաղափարի հստակ ու խորը ճանաչողությամբ օժտված բանասացը: Միավորելով երկու տոները՝ բանասացը հարազատ է մնացել յուրաքանչյուրի բուն էությանը: Առաջին երկատողում՝ Ջրօրհնեքին, Տիրոջ ծնունդը ճրագալույսերով է խորհրդանշվում, իսկ երկրորդում նույն իսկ Տիրոջ վերածնունդը՝ արևալույսով:

Հայ ժողովրդական հավատալիքներում արևն ընկալվում է իբրև կյանքի, հարատևության, վերածնության խորհրդանիշ: Հիշյալ ըմբռնումը ամենատարբեր դրսևորումներով է ի հայտ գալիս երդումներում, անեծք-օրհնանքներում. «Արևդ վկա», «Արևիդ մեռնեմ», «Արևդ մեռնի» և այլն<sup>5</sup>: Արև-կյանք ընկալումը դրսևորվել է նաև Քարինտակ գյուղից գրառած հետևյալ հավատալիքում. «Արդար մարդիկ ամեն այդ օրը տեսնում էին, թե ինչպես է ղոչը երևում երկնքում, մի քանի թուփե խաղում արևի առաջ և անհետանում»<sup>6</sup>: Հայտնի է, որ Արցախում Ջատկին զոհաբերում էին ղոչ, եգ. մատաղացու ղոչի (զուցե և զոհաբերված Քրիստոսի մտապատկերային դրսևորումը) երևալը երկնքում և կյանք պարզևող արևի հետ խաղալը տիրոջ վերածննդի խորհուրդն է ներառում:

Ինչպես երկրագործական մշակույթ կրող տարբեր ժողովուրդների, այնպես էլ հայերի նստակյաց կենսակերպը կյանքի է կոչել բազմաթիվ սովորույթներ, ծեսեր, հավատալիքներ, տեսանելի ու անտեսանելի աշխարհների միջև կապն ամրագրող ամենատարբեր միջոցներ՝ ցանկացած երևույթն իրականացնելու կամ խափանելու նպատակներով: Համահայկական ծիսահավատալիքային համակարգում հայտնի են անձրևաբեր կամ անձրևախափան ծեսերին զուգընթաց կատարվող երգերը: Մեծահասակ կանայք, փայտից պատրաստված տիկնիկը զգեստավորելով, երեխաներին էին տալիս, որոնք այն պատեցնելով դռներուռ, երգում էին ու մատաղ հա-

<sup>5</sup> Ս. Հարությունյան, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 56–57:

<sup>6</sup> Գ. Խառատյան, Հայ ժողովրդական տոներ, Ե., 2000, էջ 122:

վաքում: Արցախում երգը հայտնի է «Շուշի» և «Գողի» անվանումներով<sup>7</sup> (âղին – անձրևախափան, Գողի-ն անձրևաբեր գործառույթներով են հայտնի): Շուշիի շրջանի Քյոհնա շեն (Կիրով) և Մեծ Ղարաղշլաղ գյուղերից մեր գրառած երկու տարբերակն էլ բուն ծեսից անջատվելով (ծեսը մոռացության էր մատնվել) իբրև քարացած բանաձև էր կատարվում բանասացների կողմից: Ստորև ներկայացնում ենք երկու տարբերակներն ամբողջությամբ.

#### I տարբերակ

*Գողի, գողի, այ գողի,  
Մարթը մեռած, այ գողի,  
Տղան մեռած, այ գողի,  
Յեղ ըմ օգում վարսը քրսիմ,  
Ծուլյմ օգում թաթեն տինքիմ,  
Թոռն ըմ օգում աշխարքը թըրչի:*

#### II տարբերակ

*Գողի, գողի, այ գողի,  
Մարթը մեռե, այ գողի,  
Տղատ մեռե, այ գողի,  
Մի ծու տվեք թաթեն տինինք,  
Մի ջամ փուշի տվեք յոխա թխինք*<sup>8</sup>:

Գողին ծիսական տիկնիկի անունն է, որը նշանակում է ծուլյ, անբան, անդամալույծ, անկյալ<sup>9</sup>: Կենսական ուժից զրկված գողին զուցե տիեզերական գաղտնարանների իմացու-

<sup>7</sup> Հիշյալ անվանումների համահայկական տարբերակներն են՝ Խուրծկուլուլու, Խուչկուրուրու, Ուրբաթեկին, Պուրպատիկին, Չամչախաթուն և այլն:

<sup>8</sup> ՀԱԻԲԱ, FFVII, 6189, 6197:

<sup>9</sup> Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. I, Ե., 1969, էջ 427:

թյամբ (իր դյուքանքներով), բնության ուժերի վրա ներազդելու գործառնություններով օժտված առասպելական պառավի մի յուրօրինակ դրսևորումն է, որին՝ իբրև երկնքի ու երկրի կապն ամրագրող միջնորդի, դմնեդուռ պատեցնելով ու մատաղ հավաքելով հավակնում էին՝ Աստծո ողորմածությանն արժանանալ<sup>10</sup>։

Շուշիի շրջանի ծիսահավատալիքային համալիրում լայն տարածում ունեն «խլղացավի»՝ դիվահարություն կոչված հիվանդության, պարածիսային արարողությանը ժողովրդական բուժման կենցաղավարումը։ Այն համարվել է դիվահարություն՝ պայմանավորված հիվանդություններ հարուցող ոգիների գոյությամբ, որոնք բնակվում են մարդու մարմնում։ Դիվահարությունը կոչվել է նաև քրչկոտված, ցավագյար, քրջքոտված, խղլացավ անվանումներով։ Պարով բուժվելու նման եղանակը առկա է նաև այլ ժողովուրդների կենցաղում։ XIV դ. սկսած Եվրոպայում տարածված էր հիշյալ հիվանդության՝ «պարային խելագարություն» անվանումը, իսկ Իտալիայում այն կոչվել է «մորմացավ»<sup>11</sup>։

XIII դ. Կիրակոս Գանձակեցին նկարագրում է դիվահարվածի՝ պարով բուժումը ոմն Դավթի կողմից՝ Ամբերդի կողմերում<sup>12</sup>։

Ուշագրավ է, որ հիվանդության բուժման նման եղանակը ավանդաբար փոխանցվել և կիրառվում էր մինչև 1970-ական թվականները Շուշիի շրջանի Քարինտակ և Մեծ Դարաղշաղ գյուղերում։ Մարուսյա Յովհաննիսյանը ականատես է եղել, թե ինչպես Մեծ Դարաղշաղում «Մի սուտկա հիվանդին խաղացրալ ըն՝ զուռնա ըծիլավ։ Յու վեր օգում ար քյինար թամաշա

<sup>10</sup> Անձրևբեր և անձրևախափան ծեսերը համակողմանի լուսաբանվել են բանագետ Թ. Յարապետյանի կողմից։ Տես «Պատմա-բանասիրական հանդես», 2004, N 3, էջ 216–227։

<sup>11</sup> Ժ. Խաչատրյան, Խաղլացավի բուժումը պարով, «Լրաբեր», 1980, N 10, էջ 89–96։

<sup>12</sup> Գ. Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխ. 4. Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961, էջ 322–324։

անելու, թողում ին»։ Պարեղանակի պատվիրատուն հիվանդն էր. «Էս հի՞նչ հավան ածե»<sup>13</sup>։ Հիվանդը մեկ կամ մի քանի օր անընդմեջ պարում էր գիշեր-ցերեկ։ Բուժման նախանշանն էր՝ պարելու ցանկության մարումը։ Լեռնային Դարաբաղի տարածքում, այդ թվում և Շուշիի շրջանի վիպական բանահյուսության մեջ առանձնակի տեղ են գրավում սնահավատական գրույցները զանազան ոգիների, երևակայական էակների մասին, որոնց ժողովուրդն անվանում էր «քաշկեր»։ Հիշյալ շրջանում տարեց մարդիկ երկյուղածությամբ էին պատմում նման գրույցները։ Մեծ դարաղշաղցի Եղիշե Ենգիբարյանը, երբ պատմեց իր գրույցը քաշկերի մասին. թե՛ «Միտե ետե հունց ըմ քաշկավ ընգալ, ըգադվալ», կողքին նստած կինը երկյուղած ասաց. «Եղիշա, մին հացը կերած բիդիր, մինը մատաղ տված, տա հրգարան մինն ա ըգադվում պրծնում» Պատմում էին, թե «Մեր շենումը քաշկուտ, հնարքուտ մարդիկ շատ ըն ըլալ»<sup>14</sup>։

Շուշին իր շրջակա գյուղերով հայտնի էր հարուստ հեքիաթային ռեպերտուարով, հեքիաթասացների ուրույն ու գունեղ պատմելաոճով, հեքիաթային սյուժեների ու մոտիվների, կերպարների բազմազանությամբ։ Ցավոք, 1970-ական թվականների գրառումներում նկատելի են հեքիաթներում առկա կառուցվածքային ու բովանդակային ամենատարբեր փոփոխությունները։ Հրաշապատում և իրապատում հեքիաթների միջև բացակայում է երբեմնի հստակ տարանջատումը։ Մասնակի դեպքերում է հեքիաթը սկսվում «իլալ ա, չիլալ» և նմանատիպ երկբայական բանաձևերով։ Չափածո սկսվածքները ևս տարանջատվել են հեքիաթից և բանասացի կողմից դրանք ներկայացվում են իբրև ժանրային ինքնուրույն միավորներ։ Օրինակ՝ մեր կողմից գրառված հեքիաթի երբեմնի բաղադրիչ համարվող հետևյալ սկսվածքը՝

<sup>13</sup> FF VII ՅՄԻԲԱ 6191։

<sup>14</sup> Նույն տեղում, 6175–6179։

Քաթ, քաթ,  
 Ջվալ ցաքատ,  
 Թաթը դինուսը,  
 Կոթը ղըզուսը<sup>15</sup> .

Ներկայացվում է սոսկ իբրև հանելուկ:

Այնուամենայնիվ, տարածաշրջանում կենցաղավարող հեքիաթներն իրենց մեջ միավորել ու պահպանել են համահայկական և աշխարհում լայն տարածում գտած վիպական որոշ մոտիվներ ու սյուժեներ. «Խելոք և պել ախպերները» հեքիաթում պել ախպերը բարեհաջող դիպվածների պատճառով գերազանցում է խելոք եղբորը և բազմիցս իրեն և եղբորն ազատում դժվար իրավիճակներից<sup>16</sup>: Անխելք ու թեթևամիտ կնոջ անխոհեմ արարքների պատճառով դժվար կացության մեջ է հայտնվում ամուսինը<sup>17</sup>:

Շուշիի շրջանի վիպական բանահյուսության մեջ ուրույն տեղ ունեն զվարճապատումները: Դրանցում տեղ են գտել ոչ միայն հանրահայտ Պըլը-Պուղու, Սուլա Նասրեդինի, այլև տվյալ ժամանակաշրջանի կենցաղն ու բարքերը մարմնավորող տեղական նոր կերպարների՝ վարպետ Շաքեի, զուռնաչի Խաչու դայու, ճղացպան Բախշի դայու շուրջ հորինված երգիծապատումները: Վերջիններիս մեծ մասը տարածաշրջանում ունի իր տարբերակները: Ձրույցներում իշխողը հիմնականում բարի հունորն է, որն էլ աշխույժ տրամադրություն է հաղորդում շրջապատին:

Այսպիսով, ներկայացված ժողովրդագիտական նյութերի հակիրճ բնութագրումը վկայում է.

<sup>15</sup> ՀԱԻԲԱ FFFVII, 6223-6235:

<sup>16</sup> Նույն տեղում, 6203-6216:

<sup>17</sup> Նույն տեղում:

1. Շուշիի շրջանում թեև ժամանակի ու տարածության մեջ ժողովրդագիտական բազում արժեքներ մոռացության են մատնվել, սակայն բանահյուսական ավանդույթները իսպառ չեն կորցրել իրենց կենսունակությունը:
2. Ինչպես աշխարհի տարբեր ժողովուրդների բանարվեստում, այնպես էլ Շուշիի շրջանում բանասացը ոչ թե բանահյուսական նյութի հայեցողական կրողն է, այլև իբրև ստեղծագործող անհատ՝ բանահյուսական սյուժեների, մոտիվների ու հորինվածքների ձևավորողն ու դրանց հետագա շարժընթացը իրականացնողը:
3. Շուշիի շրջանն իր բանահյուսական և ազգագրական ավանդույթներով, հանրահայտ մոտիվների ու սյուժեների ընդգրկմամբ, տեղական յուրահատկություններով հանդերձ, համահայկական և միջազգային զուգահեռական տարբերակներում իր ուրույն տեղն է գրավում: